ՆՈՒԶԳԵՐԻ ԽՈՍՎԱԾՔԸ

ՌՈՒԲԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Մեկուկես դար առաջ քանաքեռցի և իշևանցի երկու տասնյակի չափ ընտանիքներ Շամխոր գետի ստակողմյան վերջին սարալանջին հիմնում են Նուզդեր գյուղը։ Նուզգերի խոսվածքը միակն է, որ ցայտուն կերպով պահպանում է մայր արարատյան բարբառի Քանաքեռի ենթաբարբառի հատկանիշները և մնում ինքնատիպ հարևան խոսվածքների շարքում։

Ստորև բերում ենք այդ խոսվածքի ուսումնասիրության համառոտությունը։

I Հնչյունական-հնչյունափոխական հատկանիշներ.

1. Նուզգերի խոսվածքում գտնում ենք 38 հնչյուն, որից վեցը ձայնավոր են՝ ա, օ, ու, ը, է, ի, *և 32-ը բաղաձայն՝* բ, դ, գ, գ՛, ձ, ջ, պ, տ, կ, կ՛, ծ, ճ, փ, թ, ք, ք՛, ց, չ, վ, զ, ժ, ղ, ռ, շ, խ, հ, մ, ն, լ, ր, ռ, յ: *Սրանցից* գ՛, կ՛, ք՛ *քմայնացած բաղաձայններ են, համապատասխան* գ, կ, ք, *բաղաձայնների դիրքային տարբերակները, իսկ մյուսները գրական հայերենի հնչմամբ են։ Երկբարբառներ չկան։ Շեշտը դրվում է նախավերջին վանկի վրա։*

2. Ձայնավորները սովորաբար մնում են անհնչյունափոխ, միայն նկատելի է, որ՝

ա) Ա *ձայնավորը չնայած երեք և ավելի վանկանի բառերի սկզբնավանկում մնում է անփոփոխ, բայց նախաշեշտ վանկում սղվում է, դառնում* ը *կամ ջնջվում.*

-անալի>ընալի, առաւօտ>ըռավօդ, արածել>ըրածէլ, բաժանել>պըժանէլ, գանձանակ>կընձանակ, բանալի>պընալիք, բարձրանալ>պըցրանալ, բառաչել>պըռանչէլ.

-ուծելի>ծիլի, աղանձել>ղանձէլ, աղաչանք>ղանչաք, ապսպարել>բբսպարէլ, աքացի>քացի։

Մասնավոր փոփոխության դեպքեր են. ա>է. *բաժին(ք)>պէժինք, փայծաղն>փէցէխ, արծաթ>էրծաթ, կաչաղակ>քըչէղակ, աղաւնեակ>աղունակ>յէղունակ.* ա>ի. *դալար>տիլար։*

բ) Ե *ձայնավորը միավանկ բառերի սկզբում դառնում է* յէ, *ինչպես արեվելյահայ գրական աշխարհաբարում է. եղն>յէղ, ես>յէս, երանի>յէրանի, երգ>յէրք, երկիր>յէրգիր, իսկ բազմավանկ բառերի սկզբում մնում է անփոփոխ. երազ>էրազ, երեկ>էրէգ, երկաթ>էրկաթ, երկու>էրկու։*

Բազմավանկ բառերի սկզբի բաց վանկի ե-ն *ջնջվում է, օրինակ՝ երևալ>ըէվալ, երեխայ>ըէխա, երեկոյ>ըուգ՛ու, իսկ փակ վանկում դառնում է* ը. *գերանդի>գ՛ըրանդու, գերեզման>կըրէզման, սերկևիլ>սըրգէվիլ։*

Երկու հաջորդական վանկերում առաջին ե-ն *հաջորդի տարնմանությամբ դառնում է* ի. *երես>իրէս, թեթև>թիթէվ, շերեփ>շիրէփ, երեք>իրէք, քերել>ք՛իրէլ։*

Զուգահեռ ձևեր են՝ եղբայր / աղբայր>ախպէր, եղինջ>աղինջ։

Մասնավոր փոփոխության դեպքեր են. ե>ի՝ *հրեշտակ>հըլիշտրակ, անէծք>անեծք>անիծկ.* ե>ա՝ *ծներեկ>ծընէփակ, որի մեջ, սակայն,* -եկ *փոխարինվել է* -ակ-ով։

գ) Ը *ձայնավորը սովորաբար մնում է անփոփոխ, միայն բառավերջի* ըր, ըղ *գաղտնավանկերը երբեմն շրջվում են* րը, ղը *ձևերով, իսկ* ռն *վանկի* ն-ն *ընկնում է. թանձր>թանձրը / թանձրը, լիտր>լիտրը / լիտրը, աստղ>աս-*

տրդ / աստղը. դուռն>տուռը, դառն>տառը, թոռն>թօռը, խառն>խառը, ոսն>վօսը, կաթն>կաթը։

Բառասկզբի ստ, սկ.սպ հնչյունակապակցությունները, ինչպես ընդհանուր Հայերենում, արտասանվում են ը-ով. ստանալ>ըստանալ, սկսանել>ըսկըսէլ, սպանանել>ըսպանել։

Մի շարք բառեր բառավերջում ստացել են ը. ինն>իննը, թուզ>թուզը, սէղ>սիղը, իսկ մի քանի բառերում էլ կից վանկի ու-ի ներդաշնակությամբ ը-ն դարձել է ու. կկու>կուկու, ոսկր>վօսկուս։

դ) Ի ձայնավորը նույնպես մնում է անփոփոխ, միայն որոշ բառերում մասնավոր փոփոխությամբ դառնում է ը, ու, օ, է. ի>ը՝ անիծանել>անիծել>անըծէլ, ծիծաղ>ծըծաղ. ի>ու՝ գերանդի>գ՛ըրանդու, թիկունք>թուգ՛ունք. ի>օ՝ կոծիծ>կօծօծ. ի>է՝ ծիրտ>ծէռտ։

ե) Ո ձայնավորը բառասկզբում տվորաբար արտասանվում է վ. ոտն>վօտը, որդ>վօրթ, ոշ>վօշ, որդի>վօրթի, ոշխար>վօխշար։ Բացառություն են կազմում մի քանի բառեր, որոնք արտասանվում են թե՛ վ-ով և թե՛ ճ-ով. որս>վօրս / հօրս, որթ>հօրթ, ոլորել>հօլօրէլ / հըլօրէլ։

Նախաշեշտ փակ վանկում ո-ն դառնում է ը, իսկ բառասկզբի բաց վանկում ջնջվում է. խորովել>խըրօվէլ, կոտորել>կըտօրէլ, ողողել>ղօղէլ, որոտալ>ըոտալ և այլն։ Մասնավոր փոփոխության դեպքեր են. ո>ու՝ ափսոս>ափսուս, ոռնալ>ուռնալ, ծոպ>ծուպ, հոգի>հուգ՛ յի, մորեխ>մուրէխ, մեռոն>մէռուն, խաղող>հաղուղ, մոմ>մում. ո>ա՝ զոքանչ>զանքաչ, որոճ>արօճ. ո>ի՝ գոմեշ>կ՛իմէշ։

զ) Ու ձայնավորը սովորաբար չի հնչյունափոխվում, սակայն նկատելի է, որ բառասկզբի բաց վանկում, ղ-ից առաջ կարող է ջնջվել. ուղղորդ>ղօրթ, ուղարկել>ղարդ՛ էլ, իսկ ուղ, ուխ հանգող բառերում ու-ն կարող է դառնալ օ. ածուխ>անձօղ, կակուղ>կակօղ, խարբուխ>խարփօխ։

Բառակազմի ձայնավորից առաջ ու-ն տվորաբար դառնում է վ. աղուէս>աղվէս, զղուել>ըզըվվէլ, զուարթ>զըվարթ, լուանալ>լըվանալ, ծուար>ծըվար, նուազ>նըվազ։ Միայն աստուած բառում արտասանության տեղերի մոմոտեցմամբ ու և ա ամփոփվել են, դարձել օ՝ աստօծ։

Մասնավոր փոփոխության դեպքեր են. ու>ի՝ թուք>թիք, եզունգն>ղինգ. ու>օ՝ սունկն>սօկօն։

3. Գրաբարի երկբարբառների դիմաց գտնում ենք ձայնավորներ. այսպես՝

ա) Այ>է՝ այլ>էլ, այծ>էծ, այր>էր, փայտ>փէդ, հայս>հէս, հայր>հէր, մայր>մէր, այրել>էրէլ, կայծակ>կ՛էծակ, ցայտել>ցէթէլ։

Մասնավոր փոփոխության դեպքեր են. այ>ի՝ գայլ>կ՛իլ. այ>այ՝ պայծառ>պայծառ։

բ) Աւ>օ՝ նաւթ>նօթ, օձ>օց, օդ>օթ, օգուտ>օքութ, գոտի>կոդիգ, օրհնել>օխնէլ։

Բառասկզբի բաց վանկում օ>ո-ն ջնջվել է, օրինակ՝ օրօրէլ>ըրէլ, օրորոց>ըրոռոց, իսկ փակ վանկում դարձել է ը՝ հօրաքոյր>հըրաք՛իր։

գ) Իւ դառնում է ի կամ ու. ալիւր>ալիր, արիւն>արին, հարիւր>հարիր, ձիւն>ծին։

Առանձին են մնում իւղ և գիւղ բառերը, որոնց դիմաց ունենք յէղ, կ՛էղ. սրանք գալիս են նախավոր եւղ, գեւղ ձևերից։

դ) Ոյ նույնպես դառնում է ի կամ ու. բոյթ>պիթ, զրոյց>զըրից, լոյս>լիս, կապոյտ>կապիտ, քոյր>ք՛իր, պտոյտ>պըտիտ, ոյժ>ուժ, բոյն>պուն։

ե) Եա>է, ի՝ կորեակ>կօրէկ, ցորեան>ցօրէն, սիրեալ>սիրէլ, գրեա>կ՛իրի։

4. Ձայնեղ պայթականներն ու հպաշփականները ա) սովորաբար դառնում են խուլ. բ>պ՝ բաժանել>պըժանէլ, բաց>պաց, բեռնել>պէռնէլ, բլիթ>պըլիթ, բուրդ>պուրթ. գ>կ՝ գլուխ>կըլուխ, գող>կօղ, գոմ>կում, գալ>կալ, գերեզման>կըրէզման, գզել>կըզէլ. դ>տ՝ դաս>տաս, դեղ>տէղ, դժուար>տրժար, դմակ>տրմակ, դեղին>տէղին, դողալ>տօղալ.

ձ>ծ՝ ձախ>ծախ, ձայն>ծէն, ձաւար>ծավար, ձեռն>ծէռ, ձևել>ծէվէլ, ձիւթ>ծէթ, ձիւն>ծուն. ջ>ճ՝ ջաղացք>ճաղաց, ջերմն>ճէրմ, ջիլ>ճիլ, ջոկ>ճօգ, ջուր>ճուր, ալոջ>ալօճ։

բ) Ձայնավորից և r-ից հետո սրանք ընդհանուր հայերենի օրենքով շրջվում են շնչեղ խուլի. p>փ՝ խաբել>իափէլ, ծնեբեկ>ծընիփակ, շաբաթ>շափաթ, երբ>յէփ, ուրբաթ>ուրփաթ, սրբել>սըրփէլ, սուրբ>սուրփ. գ>f՝ արեգակն>ըրէքնակ, գոգ>կօք, հագնել>հաքնէլ, էգ>էք, ուրագ>հուրաք, երգել>յէրքէլ, մարագ>մարաք, ձիգ>ծիք. դ>թ՝ օդ>օթ, արդար>արթար, բուրդ>պուրթ, երդումն>յէրթում, խորհուրդ>խօրուրթ. ձ>ց՝ օձ>օց, փորձանք>փօրցանք, որձ>վօրց, բարձրանալ>պըցրանալ, որձակ>վօրցակ. ջ>չ՝ առաջ>առաչ, աջ>աչ, արշառ>աչառ, մէջ>մէչ, յաջող>հաչող, արշ>առչ։

գ) Ռնգայինից հետո մնում են անփոփոխ. ամբար>ամբար, թումբ>թումբ, գինդ>կինդ, գունդ>կունդ, ծնունդ>ծընունդ, բրինձ>պըրինձ, թանձր>թանձըր, գանձանակ>կընձանակ։

դ) Այդպես և բարբառային բառերում, ինչպես նաև ուշ շրջանի օտար փոխառություններում. բուռն «բուք», բըռթէլ «հրել, մշտել», դրհոլ «թմբուկ», դուդա «դունչ, կտուց», դուռնա «կոռունկ», դաղել>դաղէլ և այլն։

ե) Գ>կ-ն կից է, ի ձայնավորներից առաջ քմայնանում է. դեռ>կ'է դ. դերան>կ'էրան, գինի>կ'ինի գինձ>կ'ինձ և այլն։ Առանձին պետք է հիշել գազար>կ'ազար, գաւաթ>կ'ավաթ, գարի>կ'արի, գառն>կ'առը, գործել>կ'օրծէլ, որոնց մեջ գ-ն ըստ օրինի կ դառնալուց հետո շրջվել է կ'-ի, մի բան, որ սովորական է հարևան խոսվածքներում։

զ) Առնմանության կամ տարնմանության օրենքներով են բացատրվում հետևյալ օրինակները. p>փ՝ բրդել>փըրթէլ, բշտել>փըշտէլ, բռնել>փըռնէլ. գ>f՝ ձգել>ցցել>քըցէլ, գդալ>քըթալ, գուլպայ>ք'ուլբա. դ>թ՝ դաղար>թաթար։

է) Ձ, ջ բաղաձայնների պարզեցման համար ունենք մի քանի օրինակ՝ ձգռտալ>զըկըռտալ, մէջք>մէշկ, միշնակ>միշնակ, քաջք>քաչք։

ը) Գրական լեզվի արտասանության նորմայով են՝ համբերել>համփէրէլ, մարդ>մարք, խնդրել>խընթրէլ և այլն։

թ) Մասնավոր փոփոխության դեպքեր են. ջ>չ՝ ականջ>անգաչ. ջ>չ՝ ջրորդան>շրռռօթան, որը բնաձայնական բառի տեսք է ստացել։

5. Խուլ պայթականները սովորաբար պահվում են անհնչյունափոխ, միայն նկատելի է, որ սրանք երբեմն ձայնեղանում են, երբեմն էլ՝ շնչեղխլանում. այսպես՝ ա) Ձայնեղանում են ռնգայինից, ինչպես նաև ձայնավորից հետո. պ>բ՝ ապրայ>աբրա, ապրշում>աբրշում, ստիպել>ըստիբէլ, վարդապետ>վարթաբէդ, վարժապետ>վարժաբէդ. կ>գ՝ ակ>ագ, բամբակ>պամբագ, դանակ>տանագ, ծմակ>ծրմագ, մենակ>մէնագ, ճանկ>ճանգ. տ>դ՝ աղքատ>ախկադ, հաստատ>հաստադ, տետրակ>տէդրագ, փայտ>փէգ, պատրոյգ>պադրիք. քրտնել>քըրդնէլ, սիրտ>սիրդ, մարտ>մարդ, գորտ>կօրդ, արտասուք>արդասունք. ծ>ձ՝ լծել>լըձէլ, պրծանել>պըրձանէլ, մեծ>մէնձ, ածուխ>անձօղ. ճ>ջ՝ մաճ>մաջ, մաճակալ>մաշկալ, ճանճ>ճանջ, եղիճ>աղինջ։

բ) է, ի ձայնավորներից առաջ կ-ն քմայնանում է. կենալ>կ'էնալ, կեղտ>կ'էխտ, ծաղկել>ծաւկ'էլ, կենդանի>կ'էնթանի, կերպ>կ'էրպ, ոսկի>վօսկ'ի և այլն։

Այս դիրքում կ>գ ք-ն նույնպես քմայնանում է. աշակերտ>աշագ'էրդ. թիկունք>թուգ'ունք, թակել>թագ'էլ, կիւրակէ>գ'իրագ'ի, փակել>փագ'էլ։

գ) Ծ, ճ բաղաձայնների պարզեցման համար ունենք մի քանի օրինակ՝ ծածկել>ծասկ'էլ, նեղուածք>նէղվասկ, որձկալ>վօրսկալ, խղճմտանք>խըշմըտանք և այլն։

դ) Մասնավոր փոփոխության դեպքեր են. պ>փ՝ պսակ>փըսագ, պարտակնլ>փարտակ՛էլ, կ>ք՝ կաշաղակ>քըշէղակ, կշիռք>քըշէրք, կ>գ՝ կեանք>գ անք, կեռաս>գ՛իլաս. տ>թ՝ օգուտ>օքութ, հոտոտել>հօթհօթալ—բոլոր օրինակներում էլ փոփոխությունը կատարվել է բառակազմի խուլերի առնմանությամբ կամ տարնմանությամբ: կ>բ՝ բոբիկ>պօբիգ. կ>դ՝ կանկառ>զանգալ. ծ>ց՝ ծիծեռնակ>ցըցէռնակ:

6. Շնչեղ խուլ պայթականներն ու կիսաշփականները նույնպես մնում են անփոփոխ, միայն՝

ա) չ, ց պառզվելով վերածվում են շ, ս-ի. աչք>աշկ, բաց թողուլ>պաս թօղէլ:

բ) Կից խուլ բաղաձայնի առնմանությամբ ք-ն դառնում է կ. իսկ է, ի ձայնավորներից առաջ քմայնանում է. խօսք>խօսկ, նեղուածք>նէղվասկ, անէծք>անիսկ, հրաշք>հըրաշկ, մեղք>մէխկ, քիթ>ք՛իթ, քոյր>քէր>ք՛էր քիստ>ք՛իստ, քերել>ք՛իրէլ, քենի>ք՛էնի, կնքել>կընք՛էլ:

7. Ձայնեղ շփականները սովորաբար պահվում են անփոփոխ, սակայն կից բաղաձայնի խուլերի առնմանությամբ շրջվում են խուլի՝ զ>ս՝ ազբ>ասպ, ազգ>ասկ. ղ>խ՝ աղբ>ախպ, աղբիւր>ախպուր, առողջ>առօխճ, զղջալ>զըխճալ, շեղջ>շէխճ, մաղձ>մախծ, բողկ>պօխկ, խեղդել>խէխտէլ, խիղճ>խիխճ, աղքատ>ախկադ, մեղք>մէխկ, շողք>շօխկ, թուղթ>թուխտ:

8. Խուլ շփականները նույնպես մնում են անհնչյունափոխ, միայն՝

ա) Հ-ն ր-ից հետո ընկնում է. աշխարհ>աշխար, խոնարհ>խօնար, շնորհք>շընօրք:

բ) Բառակազմի խ...ղ տանելի չէ, ուստի խ-ն դառնում է հ, իսկ ղ...խ>ղ...ղ՝ խաղ>հաղ, խաղաղ>հաղաղ, խաղող>հաղուղ, շաղախել>շըղաղէլ:

գ) Ս>շ, շ>ժ փոփոխությունների համար ունենք՝ կսմթել>կըմըշտել, շրեշ>շըրէժ, շարժ>ժաժ: Սալոր>շլօր և սեամք>շէմք զուգահեռ ձևեր են:

դ) Հ>խ. հարբուխ>խարփօխ՝ բառակազմի խ-ի առնմանությամբ է:

9. Ձայնորդներից մ, ռ, լ սովորաբար պահվում են անփոփոխ, յ-ն բառասկզբում ընկնում է կամ դառնում հ, բառավերջի հավելվածական ն-ն ընկնում է, ր-ն բաղաձայնային խուլերից առաջ դառնում է ռ. այսպես՝ ասեղն>ասէղ, դուռն>տուռը, նուռն>նուռ, ձուկն>ծուգ, արջ>առչ, արճիճ>առճիճ, կարճ>կառճ, կրծել>կըռծէլ, ծիրտ>ծէռտ, խարտ>խառտ, պղտոր>պըռտօղ: Մասնավոր փոփոխության դեպքեր են՝ ն>մ՝ կոկոն>կօկօմ, ննջել>մընջալ, նզովածն>մըզօված, մ>բ՝ մրջիմն>բըռչիմ:

II Ձևաբանական հատկանիշներ.

1. Հոգնակիակերտ մասնիկներ են՝ էր, նէր. ան, նի, էք, անիք, ք՛էր, իք, դինք. էր ստանում են միավանկ բառերը, իսկ նէր, նի՝ բազմավանկ բառերը. քար—քարէր, փայտ>փէդ—փէդէր, մատն>մատ—մատնէր, ծունկ>ծունգ—ծընգնէր, լուծ>լուձ—լըձնէր, տուն—տընէր, բերան>պէրան—պէրաննի, ծաղիկ—ծախկընի, տախտակ>տախտագ—տախտադնի. ք ստանում են ի-ով և ա-ով վերջացող բառերը՝ ջուրի>ճօրի—ճօրիք, խնամի>խընամի—խընամիք, տղայ>տըղա—տըղէք, երեխայ>ըրէխա—ըրէխէք. ան՝ ձու>ծու—ծըվան/ծըվէր, ձի>ծի—ծիյան. էք՝ կատու—կատվէք, աղջիկ>ախճիկ—ախճըդ՛էք. անիք՝ ձի>ծի—ծիյանիք, կընիգ՝ կին—կընանիք. ք՛էր՝ գինի>կ՛ինի—կ՛ինիք՛էր, ջուրի>ճօրի—ճօրիք՛էր, նանի—նանիք՛էր. իք՝ եզ>յեզը—յէզնիք, մարդ>մարթ—մարթիք. դինք՝ եղբայր>ախպէր—ախպէրդինք, աներ>հանէր—հանէրդինք, տագր>տէքըր—տէք՛էրդինք, ընկեր>հնգ՛էր—հընգ՛էրդինք. քոյր<քէր>ք՛էր—քըվօրգինք:

2. Հոլովները յոթն են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական:

3. Հոլովումներն են՝ ի, ու, ա, ան, օ, ունչ, ց (անց, օնց), վա: Ամենից տարածվածը ի հոլովումն է, մյուսները բաշխվում են այսպես՝ ժամանակի անունների մի մասը ենթարկվում է վա հոլովման, ձայնավորով վերջացող բառերը՝ ու հոլովման, վերջնահանգ ե-ն կորցրած բառերի զգալի մասը՝ ա հոլովման, ցեղակցություն—գերդաստանի անդամ ցույց տվող բառերը՝ օ, իսկ դիեմ, անմ, օնմ հոգնակիակերտ մասնիկներով կազմվող բառերը՝ ց հոլովման:

Օրինակներ.

Ուղղ.-հայց.	քար	քարէր	պէրան	պէրաննի
Սեռ.	քարի	քարէրի	պէրանի	պէրաննէրի
Տր.	քարին	քարէրին	պէրանին	պէրաննէրին
Բաց.	քարից	քարէրից	պէրանից	պէրաններից
Գործ.	քարով	քարէրով	պէրանով	պէրաննէրով
Ներգ.	քարում	քարէրում	պէրանում	պէրաննէրում

Ուղղ.-հայց.	ծի	կ՚արի	տղա
Սեռ.	ծիյու	կ՚արու	տղու
Տր.	ծիյուն	կ՚արուն	տղուն
Բաց.	ծիյուց	կ՚արուց	տղուց
Գործ.	ծիյով	կ՚արով	տղով
Ներգ.	(ծիյումը)	կ՚արում	—

Այս խմբի բառերի մի մասը պատկանում է ի հոլովման. օրինակ՝ ձու>ծու, լեզու>լիզու—ծրվի, լիզվի. ծրվից, լիզվից. ծրվով, լիզվով, ծրվում:

Ուղղ.-հայց.	տուն	կ՚առը	ծունգը
Սեռ.	տան	կ՚առան	ծրնգան
Տր.	տանը	կ՚առանը	ծրնգանը
Բաց.	տանից	կ՚առանցը	ծրնգանիցը
Գործ.	տանով	կ՚առանովը	ծրնգանովը
Ներգ.	(տանը)	(կ՚առանումը)	ծրնգանումը

Սրանց հոգնակին անցնում է ի հոլովման. տրնէրի, ծրնգնէրի և այլն:
Ուղղ.-հայց. տարի, ամիս, սեռ.-տր. տարվա, ամսվա, բաց. տարվանից (տարուց, ամսից, գործ. տարով, ամսով, ներգ. տարում, ամսում:

Ուղղ.	հէր	ախպէր	տէքըր	հընգ՚էր	ք՚իր
Սեռ.	հօր	ախպօր	տէքօր	հընգօր	քրվօր
Տր.-հայց.	հօրը	ախպօրը	տէքօրը	հընգօրը	քրվօր
Բաց.	հօրից	ախպօրից	տէքօրից	հընգօրից	քրվօրից
Գործ.	հօրով	ախպօրով	տէքօրով	հընգօրով	քրվօրով

Ուղղ.	կընիգ	ախճիգ	տէր
Սեռ.	կընգա	ախճրգա	տրրունչ
Տր.-հայց.	կընգանը	ախճրգանը	տրրունչը
Բաց.	կընգանից	ախճրգանից	տրրունչից
Գործ.	կընգանով	ախճրգանով	տրրունչով

Ուղղ.	ծիյան(ք)	ք՚էնիք
Սեռ.	ծիյանունց, ծիյանօնց	ք՚էնիք՚էրանց
Տր.-հայց.	ծիյանունցը, ծիյանօնցը	ք՚էնիք՚էրանցը
Բաց.	ծիյանունցի(ց), ծիյանօնցի(ց)	ք՚էնիք՚էրանցի (ց)
Գործ.	ծիյանունցով, ծիյանո(ն)ցով	ք՚էնիք՚էրանցով

Այսպես հոլովվում են կ՚ինիք, ճորիք՝ ջորիներ—ճորիք՚էրանց, մրտանիք—մրտանիք՚, էրանց, յէզնիք՝ եզներ—յէզնանց, տրղէք՝ տղաներ—տրղէրանց, ըրէխէք՝ երեխաներ—ըրէխօնց, ախպէրդինք՝ եղբայրներ—ախպէրդօնց, տէք՚էրդինք—տեգրեր—տէք՚էրդանց, հընգ՚էրդինք՝ ընկերներ—հընգ՚էրդանց, կընանիք՝ կանայք—կընանօնց, ախճրգ՚էք՝ աղջիկներ—ախճրգ՚էրանց և այլն:

Եթե բառը հոգնակի թվում ստանում է երկու տարբեր հոգնակիակերտ մասնիկ, ապա հոլովվում է տարբեր ձևերով. օրինակ՝ փէսէք/փէսըք՛ էր՝ փեսաներ—փէսէք՛ի/փէսըք՛ի/էրանց, փէսէք՛ից/փէսըք/էրանցից: Աստված բառը հոլովվում է այսպես՝ ուղղ. աստօձ/աստօծ, սեռ. աստու, բաց. աստուց/աստանէց/աստվածանից, գործ. աստօձօվ/աստանով:

4. Որոշող հոդերն են՝ ը/ն, ս, տ, որոնք գործածության նորություն չունեն. —Բօրօղը՝ ոթիսը փախավ. Տըղուս տէ՞սար. Ք՛ էնուցըս խըռով էմ. Անըմիտ մէռնէմ:

5. Ածական անունների համեմատության աստիճանները կազմվում են ամենա, շատ, ք՛իչ, լօխնից բառ ու ձևերով. ամէնապարագ, լօխճից պարագ, շատ պարագ, ք՛իչ/պատառ պարագ և այլն:

6. Դասական թվականները կազմվում են թե՛ ընջի (ադրբ.) և թե՛ էրօրթ/րօրթ մասնիկներով. առաչի, յէրգրօրթ/էրկուընջի, յէրօրթ/իրէքընջի, չօրօրթ/չօրսընջի, հինգ՛էրօրթ/հինգընջի և այլն:

7. Անձնական դերանունները հոլովվում են այսպես.

Ուղղ.	յես	մէնք	տու	տուք	ինքը	իրանք
Սեռ.	իմ	մէր	քու	ծէր	իրա	իրանց
Տր.-Հայց.	ինձ	մէզ	ք՛էզ	ծէզ	իրան	իրանց
Բաց.	ընձանի(ց)	մըզանի(ց)	քըզանի(ց)	ծըզանի(ց)	իրանից	իրանցի(ց)
Գործ.	ընձանօվ	մըզանօվ	քըզանօվ	ծըզանօվ	իրանօվ	իրանցօվ
Ներգ.	ընձանըմ	մըզանըմ	քըզանըմ	ծըզանըմ	իրանըմ	իրանցըմ

Ցուցական դերանունների արմատական ձևերի հոլովումը.

Ուղղ.	էս, սա	սըրանք	էտ, տա	տըրանք	էն, նա	նըրանք
Սեռ	սըրա	սըրանց	տըրա	տըրանց	նըրա	նըրանց
Տր.	սըրան	սըրանց	տըրան	տըրանց	նըրան	նըրանց
Հայց.-ուղղ.	կամ տր.					
Բաց.	սրանի(ց)	սրանցի(ց)	տրանի(ց)	տրանցի(ց)	նրանի(ց)	նրանցի(ց)
Գործ.	սրանօվ	սրանցօվ	տրանօվ	տրանցօվ	նրանօվ	նրանցօվ
Ներգ.	սրանըմ	սրանցըմ	տրանըմ	տրանցըմ	նրանըմ	նրանցըմ

Հարաբերական դերանունների հոլովումը.

Ուղղ.	օվ՝ ով	օվք՛էր	վօր՝ որ	ինչ	ընչէր՝ ինչեր
Սեռ	ում		վօրի	ընչի	ընչէրի
Տր.	ում		վօրին	ընչին	ընչէրին
Հայց.	ումից		վօրին	ինչ	ընչէր
Բաց.	ումօվ		վօրից	ընչից	ընչէրից
Ներգ.	—		վօրօվ	ընչօվ	ընչէրօվ
			—	ընչըմ	(ընչէրըմ)

Մյուս դերանունների հոլովումը.

Ուղղ.	ուրիշ	ուրիշնին	ամէնքը	լօխ՝ բոլորը	—
Սեռ	ուրշի	ուրիշնէրի	ամէքի	լօխի	իրար
Տր.-Հայց.	ուրիշին	ուրիշնէրին	ամէքին	լօխին	իրար
Բաց.	ուրիշից	ուրիշնէրից	ամէքից	լօխից	իրարից
Գործ.	ուրշօվ	ուրիշնէրօվ	—	—	իրարօվ

8. Դերբայները յոթն են՝ անորոշ՝ առնէլ, անկատար՝ առնըմ, ապառնի՝ առնէլու, վաղակատար՝ առէլ, հարակատար՝ առած, ենթակայական՝ առնօղ: Նրանցից եղանակային ձևեր չեն կազմում ապառնի և ենթակայական դերբայները:

9. Բայի եղանակներն են՝ սահմանական, հրամայական, ըղձական, պայմանական և հարկադրական:

10. Օժանդակ բայի ձևերն են.

Ներկա՝ էմ, էս, ա, էնք, էք, էն չէմ, չէս, չի, չենք, չէք, չեն
Անցյալ՝ ի, իր, էր, ինք, իք, ին չի, չիր, չէր, չինք, չիք, չին
Ապառնի՝ դէմ, դէս, դի, դէնք, դէք, դէն չըդէմ, չըդէս, չըդի, չըդէնք, չըդէք, չըդէն
Անց. ապառնի՝ դի, դիր, դէր, դինք, դիք, դին չըդի, չըդիր, չըդէր, չըդինք, չըդիք, չըդին
11. Առկա է երկու խոնարհում՝ է և ա—լըսէլ՝ լսել, քընալ՝ գնալ.

Սահմանական եղանակ

Ներկա՝ լըսըմ/քընըմ էմ, էս, ա, էնք, էք, էն
Անց. անկատար՝ լըսըմ/քընըմ ի, իր, էր, ինք, իք, ին
Ապառնի՝ լըսիլ/քընալ դէմ, դէս, դի, դէնք, դէք, դէն
Անց. ապառնի՝ լըսիլ/քընալ դի, դիր, դէր, դինք, դիք, դին
Վաղակատար՝ լըսէլ/քընացել էմ, էս, ա, էնք, էք, էն
Անց. վաղակատար՝ լըսէլ/քընացել ի, իր, էր, ինք, իք, ին
Հարակատար՝ լըսած/քընացած էմ, էս, ա, էնք, էք, էն
Անց. հարակատար՝ լըսած/քընացած ի, իր, էր, ինք, իք, ին
Անց. կատարյալ՝ լըսէցի, լըսէցիր, լըսէց, լըսէցինք, լըսէցիք, լըսէցին
քընացի, քընացիր, քընաց, քընացինք, քընացիք, քընացին
Հրամայական եղանակ՝ լըսի՛—լըսէ՛ցէք, քընա՛—քընա՛ցէք
Ըղձական եղանակ. ապառնի՝ լըսէմ, լըսէս, լըսի, լըսէնք, լըսէք, լըսէն, քընամ, քընաս, քընա, քընանք, քընաք, քընան
Ըղձական անց. ապառնիի համար գործ են ածվում անց. վաղակատարի ձևերը.—Ցէթէ հաց ի կ՝ էրէլ «Եթե հաց ուտեի».—Վօր ասիլ իր «Որ ասեիր».
Պայմանական եղանակ. ապառնի՝ կըլըսէմ, կըլըսէս, կըլըսի—կըքընամ... անց. ապառնի՝ կըլըսի, կըլըսիր, կըլըսէր—կըքընի, կըքընիր, կըքընէր...
Հարկադրական եղանակ. ապառնի՝ պէտկա լըսէմ/լըսէս/լըսի—պէտկա քընամ... լըսիլ/քընալ բըդէմ, բըդէս, բըդի, բըդէնք, բըդէք, բըդէն անց. ապառնի՝ լըսիլ/քընալ բըդի, բըդիր, բըդէր, բըդինք, բըդիք, բըդին
12. Ժխտական խոնարհում
Սահմանական ներկա՝ լըսըմ/քընըմ չէմ, չէս, չի, չենք, չէք, չեն
անց. անկատար՝ լըսըմ/քընըմ չի, չիր, չէր, չինք, չիք, չին
ապառնի՝ լըսիլ/քընալ չըդէմ/չըբըդէմ, չըդէս/չըբըդէս...
անց. ապառնի՝ լըսիլ/քընալ չըդի/չըբըդի, չըդիր/չըբըդիր...
վաղակատար՝ լըսէլ/քընացել չէմ, չէս, չի, չենք, չէք, չեն
անց. վաղակատար՝ լըսէլ/քընացել չի, չիր, չէր չինք, չիք, չին
հարակատար՝ լըսած/քընացած չէմ, չէս, չի, չենք, չէք, չեն
անց. հարակատար՝ լըսած/քընացած չի, չիր, չէր, չինք, չիք, չին
անց. կատարյալ՝ լըսէցի/քընացի վօշ, լըսէցիր/քընացիր վօշ...
Արգելական հրամայական. լըսի՛/քընա՛ մի-լըսի՛/քընա՛ միք
Ըղձական ապառնի՝ լըսէմ/քընամ վօշ, լըսէս/քընաս վօշ, լըսի/քընա վօշ... անց. ապառնի (տե՛ս անց. վաղակատարի ձևերը)։
Պայմանական եղանակ. ապառնի՝ լըսըլ/քընալ չէմ, չէս, չի, չենք, չէք, չեն
անց. ապառնի՝ լըսիլ/քընալ չի, չիր, չէր, չինք, չիք, չին
Հարկադրական եղանակ (տե՛ս սահմանական ապառնիի և անց. ապառնիի ձևերը)։

Արարատյան բարբառի բազմաթիվ հատկանիշներ արդեն վերացել են, վերացել ու վերանում են նաև նրա Նորքի, Նուզզերի ենթաբարբառներն ու խոսվածքները։ Այն, ինչ ամփոփեցինք վերը, կարող է օգտակար լինել արևելահայ աշխարհաբարի հիմքում ընկած լայնատարած բարբառի ուսումնասիրության ամբողջացմանը։

НУЗГЕРСКИЙ ГОВОР

РУБЕН БАГРАМЯН

Резюме

Нузгерский говор единственный из говоров канакерской группы Араратского диалекта, существующий среди говоров Карабахского диалекта, распространенного в Шамхорском и Дастафюрском районах Азербайджанской ССР.

Вот уже полтора века он сохраняет неизменным фонетические и морфологические особенности диалекта-основы, а именно: 1) гласные нижнего подъема в отличие от других говоров не палатализуются во всех позициях; 2) согласные «գ—г» «կ—к» «ք—к» палатализуются лишь перед гласными верхнего подъема («է—э», ի—и»); 3) имена существительные, оканчивающиеся на «ի», переходят в группу склонений с окончанием на «ու» и т. д.